ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀՌՉԱԿՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակով հայ ժողովրդի ու նրա քաղաքական ուժերի կամքից և մտայնությունից անկախ սկսվեց Հայաստանի անկախության անտեսանելի գործընթացը: Հայտնի է, որ մի քանի տասնամյակ շարունակ (Հայկական հարցի միջազգայնացումից ի վեր) հայ ժողովրդի և նրա քաղաքական շրջանների հիմնական ձգտումը Տաճկահայաստանի ազատագրումն էր սուլթանական բիրտ լծից, սակայն աշխարհավեր պատերազմն իր չարաղետ հետևանքներով հանգեցրեց նրան, որ Ռուսահայաստանը կանգնեց ազատության և անկախության փաստի առաջ: "Անկասկած,– գրում է Հ. Իրազեկն իր հուշերում,– համաշխարհային առաջին պատերազմն և Ռուսական յեղափոխութիւնը եղան Հայաստանի ազատութեան ծնող մայրը"[1]:

Հետփետրվարյան շրջանում դասակարգային իշխանության մարմինների կողքին առաջացան նաև ազգային իշխանության ձևեր: Հայ հասարակական-քաղաքական կյանքում նշանակալի իրադարձություն եղավ 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին բազմակուսակցական հիմունքներով Թիֆլիսում Արևելահայերի համագումարի (համախորհրդակցության) հրավիրումը: Քննելով օրախնդիր բազում հարցեր՝ միաժամանակ համագումարն առաջ քաշեց ազգային պետականության գաղափարը և անհրաժեշտության դեպքում դրան պատրաստ լինելու հրամայականը: Այդ կապակցությամբ համագումարն ընդունեց հետևյալ բանաձևը. "Ընդունելով ազգերի ինքնորոշման իրավունքը հայ ժողովուրդը պիտի ձգտի իրականացնել իր այդ իրավունքը պետականության հիմունքներով ու սկզբունքներով, *անդրկովկասյան ժողովուրդների դեմոկրատիայի փոխադարձ համաձայնությամբ (ընդգծումը մերն է –* Ա. Հ.*)"[2]: Կարելի է վստահաբար ասել, որ Արևելահայերի համագումարը դրեց ազգային պետականության գաղափարի նյութականացման սկիզբը: Բազմակուսակցական սկզբունքով ստեղծվեց 15 հոգուց բաղկացած Հայոց (Կենտրոնական) Ազգային խորհուրդ, որը, որպես արևելահայ կյանքի գերագույն գործադիր մարմին, իր առաջին քայլերը սկսեց անել այդ ուղղությամբ:*

---

[1] *Յ. Իրազեկ (Յակովբ Տեր-Յակովբեան). Մոտիկ անցեալից, Պեյրութ, 1956, էջ 3:*

[2] *"Բանբեր Հայաստանի արխիվների", 1992, - 1–2, էջ 77:*

Հարկ է նշել, որ մինչ այդ հայերն իրենց կուսակցությունների հետ արտահայտվում էին ռուսական համապետականության օգտին՝ աշխատելով "իրենց ազգային ձգտումները հաշտեցնել համառուսական պետական շահերի հետ"[3]: Հետփետրվարյան շրջանում հայությանը մտահոգում էր երկու խնդիր՝ Ռուսաստանի օգնությամբ լուծել մեծապես հայաթափ եղած Թուրքահայաստանի հարցը և Անդրկովկասում անցկացնել վարչական վերաբաժանում ազգագրական սկզբունքով: Միաժամանակ հայ ազգային կուսակցություններն արտահայտվում էին Անդրկովկասի ու Հայաստանի լայն ինքնավարության օգտին՝ Ռուսաստանի դաշնային դեմոկրատական հանրապետության կազմում[4]:

Բոլշևիկների՝ 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո դրությունն ավելի բարդացավ: Կայսրության առանձին երկրամասեր, այդ թվում Անդրկովկասը, դուրս մնացին նորաստեղծ խորհրդային կառավարության (կենտրոնի) հսկողությունից: Կազմալուծված և անգործության մատնված Անդրկովկասյան հատուկ կոմիտեին (ՕԶԱԿոմ-ին) փոխարինեց 1917 թ. նոյեմբերի 15-ին ստեղծված Անդրկովկասյան կոմիսարիատը՝ իբրև երկրամասի գործադիր իշխանություն, իսկ 1918 թ. փետրվարի 10-ին բացվեց նաև Անդրկովկասի խորհրդարանը (Սեյմը)՝ իբրև օրենսդիր մարմին: Իրադարձությունների բերումով սկսվեց Անդրկովկասի աստիճանական մեկուսացումը Ռուսաստանից:

Սակայն Անդրկովկասի կոմիսարիատի և Սեյմի գոյության առաջին իսկ օրերից երևան եկան երկրամասի երեք գլխավոր ազգային հատվածների (վրացի, հայ, կովկասյան թյուրք) ձգտումների ու շահերի ներհակությունները: Այն ավելի բացահայտ դրսևորվեց 1918 թ. հունվարի վերջից թուրքական զորքերի հարձակման պայմաններում:

Ռուսական հեղափոխությունների հետևանքով բանակը քայքայվեց, կազմալուծվեցին ռազմաճակատները, այդ թվում՝ Կովկասյանը: Օգտվելով նպաստավոր հանգամանքից և խախտելով 1917 թ. դեկտեմբերի 5-ին Տրապիզոնում ստորագրված թուրք-անդրկովկասյան զինադադարը՝ 1918 թ. հունվարի 30-ին թուրքական զորքերն անցան լայնամասշտաբ հարձակման Կովկասյան ամբողջ ռազմաճակատում: Մեկ-երկու ամսում թուրքերը վերագրավեցին ամբողջ Արևմտյան Հայաստանը, իսկ գարնանը ներխուժեցին Անդրկովկաս ու Արևելյան Հայաստան:

Անդրկովկասյան կոմիսարիատում և Սեյմում մեծամասնություն կազմող ազգային երկու (վրացի և կովկասյան թյուրք) միավորների ներկայացուցիչները Թուրքիայի պարտադրանքով բռնեցին Անդրկովկասը Ռուսաստանից մեկուսացնելու, անջատելու և, ի վերջո, անկախացնելու ուղի: Ինչ վերաբերում է Անդրկով-

---

[3] Ս. Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 18:

[4] Ա. Հակոբյան. Հայաստանի անկախության ուղին (1917–1918 թթ.).– "Նորք" (Երևան), 1998, - 2, էջ 64:

կասյան կառավարությունում և Սեյմում իր քաղաքական կշռով երրորդը համարվող Հ. Յ. Դաշնակցություն կուսակցության դիրքորոշմանը, ապա պետք է ասել, որ եթե 1917 թ. աշնանը համառուսական Սահմանադիր ժողովի ընտրությունների և Անդրկովկասյան կոմիսարիատի ձևավորման փուլում կուսակցությունը խոսում էր "ազգերի ինքնորոշման" պահանջի մասին[5], ապա արդեն 1918 թ. հունվարի վերջից թուրք-անդրկովկասյան հրադադարի խախտման և թուրքական զորքերի Կովկասյան ռազմաճակատի երկայնքով հարձակման պայմաններում Դաշնակցությունն այլևս աննպատակահարմար, անգամ վտանգավոր էր համարում ինքնորոշման սկզբունքով Անդրկովկասի ու Հայաստանի անջատումը Ռուսաստանից: Այս կապակցությամբ "Հորիզոն" պաշտոնաթերթն իր փետրվարյան խմբագրականներից մեկում զգուշացնում էր, որ "Անդրկովկասի անկախությունն առնվազն թեթևամտություն է և աններելի՝ քաղաքական պատասխանատու գործիչների համար"[6]: Անդրկովկասյան կառավարության հայ անդամները և Սեյմի հայ խմբակցության ներկայացուցիչներն Անդրկովկասի, առավել ևս Հայաստանի անկախության հարցում կտրուկ դեմ էին: Օրինակ՝ Հ. Քաջազնունին, Դաշնակցության խմբակցության անունից (փետրվարի 15-ին) հանդես գալով Սեյմի նիստում, պնդում էր, որ Անդրկովկասը պետք է մնա որպես Ռուսաստանյան դաշնակցային մեծ հանրապետության անբաժան մաս[7]:

Հայոց Ազգային խորհուրդը, Սեյմի ՀՅԴ խմբակցությունը, մյուս քաղաքական ուժերը հետևողականորեն պաշտպանում էին Ռուսաստանի հետ դաշնային (ֆեդերատիվ) կապի գաղափարն այնքան ժամանակ, քանի դեռ դրսից Թուրքիան, իսկ ներսից վրաց և ադրբեջանական անջատողական ուժերը չէին դրել Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և անկախանալու խնդիրը:

Արդյունք չտվեցին 1918 թ. մարտին Տրապիզոնում ընթացող թուրք-անդրկովկասյան՝ Ռուսաստանից անջատ բանակցությունները: 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի կողոպտիչ պայմանագիրը հիասթափեցրեց անդրկովկասյան իշխանություններին: Անդրկովկասյան պատվիրակության խորհրդական Զ. Ավալովի վկայությամբ՝ Անդրկովկասի անջատմանը թափ հաղորդեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Բաթումի և Կարսի հանձնումը թուրքերին[8]:

---

[5] *"Հորիզոն" (Թիֆլիս), 26. XI. 1917 (ի դեպ, այդ մտայնության թելադրանքով էր, որ հայ քաղաքական գործիչները՝ Ստ. Շահումյանը, Հ. Զավրիյանը, Ստ. Զորյանը, Վ. Տերյանը և ուրիշներ, կազմեցին "Թուրքահայաստանի ինքնորոշման մասին" դեկրետի նախագիծը):*

[6] *"Հորիզոն", 25. II. 1918:*

[7] "Кавказское слово"(Тифлис), 17. II. 1918.

[8] З. Авалов. Независимость Грузии в международной политике 1918–1921 гг. (Воспоминания. Очерки). Париж, 1924, с. 12.

1918 թ. ապրիլի 9 (22)-ին Թուրքիայի պահանջով Անդրկովկասյան Սեյմը հռչակեց Անդրկովկասյան դաշնային դեմոկրատական հանրապետության (ԱԴԴՀ) անկախությունը: Թեև սկզբում հայերը բողոքեցին այդ ակտի դեմ (որովհետև նրանք ամենևին մտադիր չէին մեկուսանալու և կտրվելու Ռուսաստանից՝ ամենից առաջ հաշվի առնելով թուրքական ներխուժման վտանգը), սակայն հարևան (վրացի, կովկասյան թյուրք-ադրբեջանցի և այլն) ազգային միավորներից չմեկուսանալու նպատակով, ի վերջո, հավանություն տվեցին Անդրկովկասի անկախության փաստին: Այդպես վարվեցին Սեյմի ՀՅԴ խմբակցությունը, Հայոց Ազգային ժողովի արտակարգ նիստը, ՀՅԴ Թիֆլիսի ներկայացուցչական ժողովը, սոցիալ-դեմոկրատ հայ մենշևիկները և այլք[9]: Սեյմի հայ պատգամավորները, ի մասնավորի ՀՅԴ խմբակցությունը, փորձելով խուսափել մեկուսացումից, "դառնությամբ հավանություն տվեցին Անդրկովկասի անկախությանը"՝ հակառակ պարագայում նոր կոտորածների ուրվականն ավելի առարկայական էր դառնալու[10]:

Անդրկովկասյան իշխանությունները հույս ունեին, որ երկրամասի անկախության հռչակումը իրավական հիմք կտար թուրքերի հետ խաղաղ բանակցություններ վերսկսել և շուտափույթ հաշտություն կնքել: Սակայն 1918 թ. մայիսի 11-ին Բաթումում սկսված թուրք-անդրկովկասյան հաշտության բանակցությունները դարձյալ արդյունք չտվեցին, քանի որ թուրքերը Բրեստ-Լիտովսկի պայմանագրից շատ ավելի կողոպտիչ պահանջներ ներկայացրին և բանակցությունները դարձյալ մտան փակուղի: Դրան զուգահեռ թուրքական զորքերը, թույլ դիմադրության հանդիպելով, շարժվում էին Անդրկովկասի խորքերը:

Կովկասյան ճակատի քայքայման և ռուսական զորքի հեռանալու պայմաններում թուրքական զորքին դիմակայող միակ ուժը, թերևս, նոր ձևավորված Հայկական բանակային կորպուսն էր գեներալ Թովմաս Նազարբեկյանի հրամանատարությամբ: Անդրկովկասյան կառավարությունում ու Սեյմում առկա ազգային-քաղաքական հակասությունների և տարամերժ դիրքորոշումների պայմաններում, անդրկովկասյան կառավարության նախագահ Ա. Չխենկելու դավաճանական վարքագծի հետևանքով, գրեթե առանց կրակոցի ապրիլի 12-ին թուրքերին հանձնվեց լավ ամրացված Կարս քաղաքամրոցը:

Օգտվելով նպաստավոր հանգամանքից՝ մայիսի 15-ին թուրքական զորքերը հանկարծակի հարձակումով գրավեցին Ալեքսանդրապոլը և առաջ շարժվեցին երկու հիմնական ուղղություններով: Թուրքական զորքի մի խմբավորում Ալեքսանդրապոլից իջավ հարավ և երկաթուղուն համընթաց շարժվեց դեպի Արարատյան

---

[9] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. Тифлис, 1919, с. 215; *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 124, թ. 25–33, "Հորիզոն", 11. V. 1918:*

[10] *Ռ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Երևան, 2005, էջ 28:*

դաշտ՝ Երևանն ու Էջմիածինը գրավելու, իսկ մյուսը՝ Ղարաքիլիսա – Դիլիջան – Քարվանսարա – Ղազախով ռազմավարական ուղղություն վերցրեց դեպի Բաքու՝ տիրանալու նավթին և խորտակելու Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունան:

Հայ ժողովրդի գլխին նորից կախվեց ֆիզիկական բնաջնջման վտանգ: Չունենալով այլ ելք՝ Երևանի և Արարատյան դաշտի ողջ հայ բնակչությունն ազգային-ազատագրական կռվի ելավ, ուր վճռվելու էր նրա լինել-չլինելու հարցը: Այդ օրերին հրապարակվեցին գեներալներ Թ. Նազարբեկյանի և Մ. Միլիկյանի՝ հայ ժողովրդին ուղղված մարտաշունչ կոչերը՝ Հայրենիքն ազատագրելու համար ելնել սրբազան պատերազմի:

100 տարի առաջ՝ մայիսի 22-ի վաղ առավոտյան, եկեղեցու զանգերի ղողանջների ներքո սկսվեց Սարդարապատի պատմական ճակատամարտը: Հայկական զինուժը հուժկու գրոհով հետ վերցրեց մեկ օր առաջ թշնամու գրաված Սարդարապատ գյուղն ու կիսակայարանը. թուրքերը, մեծ կորուստներ տալով, նահանջեցին: Մի քանի օր տևած համառ ու ծանր մարտերից հետո թուրքական 15-հազարանոց զորքը պարտվեց և հարկադրված նահանջեց Ալեքսանդրապոլի ուղղությամբ:

Արարատյան դաշտի ինքնապաշտպանության ոգին ժողովրդի բուռն ցանկությամբ Հայոց Ազգային խորհրդի լիազոր, Երևանի դիկտատոր հռչակված Արամ Մանուկյանն (Սարգիս Հովհաննիսյան, 1879–1919 թթ.) էր: Մայիսի 26-ին՝ երեկոյան, Երևանյան զորախմբի հրամանատար Մ. Միլիկյանը զեկուցում է Երևանի Ազգային խորհրդին՝ թշնամու ջախջախման մասին:

Սարդարապատի ճակատամարտին գրեթե զուգընթաց՝ մայիսվերջյան այդ օրերին ահեղ մարտեր մղվեցին նաև Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում: Մայիսի 22-ին թուրքական մի դիվիզիա, գրավելով Համամլուն, շարժվեց դեպի Բաշ-Ապարան՝ նպատակ ունենալով Երևանի վրա գրոհել հյուսիսից, մտնել Արարատյան դաշտ և Սարդարապատի մոտ հայկական զորամասերին հարվածել թիկունքից: Հայկական զորամասը Դրոյի (Դրաստամատ Կանայան) հմուտ ղեկավարությամբ, մայիսի 23–27-ի ընթացքում ոչ միայն կասեցրեց թուրքերի առաջընթացը, այլև մայիսի 28-ին մի խիզախ հակագրոհով փախուստի մատնեց թշնամուն:

Մայիսի 25–29-ը ծանր մարտեր տեղի ունեցան Ղարաքիլիսայի մոտ: Չնայած թշնամին, ի վերջո, գրավեց քաղաքը և շարժվեց առաջ, սակայն այնտեղ նույնպես հայերը ցույց տվեցին, հիրավի, հերոսական դիմադրություն, որի մասին հետո խոստովանել են թուրք հրամանատարներ Մեհմեդ Վեհիբ և Յաղուբ Շնքեթ փաշաները[11]:

---

[11] Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 248:

Այսպիսով՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերում հայ ժողովուրդը կարողացավ թշնամուն արժանի հակահարված տալ ու վիժեցնել Արևելյան Հայաստանը զավթելու և տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքերի ծրագիրը: Մայիսյան հաղթական հերոսամարտերով հնարավոր եղավ լուծել երկու առանցքային խնդիր. ա) հայ ժողովուրդը, կյանքի ու մահվան ահեղ մարտեր մղելով, կարողացավ արևելահայ հատվածը փրկել նոր եղեռնից և բ) հաղթական Մայիսը ստիպեց հակառակորդին հաշվի նստել հայերի հետ և ճանաչել իր ազատ ու անկախ ապրելու իրավունքը:

* * *

Անշուշտ, 1918 թ. գարնանը սուր հակասություններ էին առաջացել իրեն անկախ հռչակած Անդրկովկասյան դաշնային դեմոկրատական հանրապետության թե՛ կառավարության և թե՛ խորհրդարանի ներսում: Հիմնականում վրացի, հայ և կովկասյան թյուրք (ադրբեջանցի) ազգերի ներկայացուցիչներից բաղկացած Անդրկովկասյան դաշնային իշխանության մարմիններում առկա էին ազգային-տարածքային սուր վեճեր, քաղաքական իրարամերժ կողմնորոշումներ, միջկուսակցական հակամարտություններ և այլն: Նրանց միջև միասնություն չկար պատերազմի և խաղաղության հարցում: Եթե հայերը, մասամբ նաև վրացիները, թուրքական զորքերին դիմադրելու, ինքնապաշտպանվելու փորձեր էին անում, ապա ադրբեջանցիները "աներկիմաստ, ուղղակի բացահայտ հայտարարում էին, որ իրենք չեն պատերազմի Թուրքիայի դեմ"[12]:

Քաղաքական կողմնորոշման առումով, եթե հայերը ներքուստ կողմնորոշված էին դեպի Ռուսաստանը, Կովկասի մահմեդականությունը՝ միանշանակ դեպի Թուրքիա, ապա վրացիներն իրենց շահերի թելադրանքով հակվեցին դեպի Գերմանիա: Պատկերավոր ասած՝ 1918 թ. գարնանը երկրամասում ստեղծվել էր կոռիլովյան հայտնի առակի այն պատկերը, երբ Անդրկովկասյան դաշնային հանրապետության բաղկացուցիչ երեք ազգային միավորներից յուրաքանչյուրը "անդրկովկասյան սայլը" միաժամանակ քաշում էր իր ուղղությամբ: Այդ անհամաձայնությունների ու ազգային շահերի հակասությունների հետևանքով էր, որ Անդրկովկասը ի վիճակի չեղավ քիչ թե շատ ծանրակշիռ դիմադրություն ցույց տալ թուրքական ներխուժմանը: Ալ. Խատիսյանի պատկերմամբ՝ թուրք-անդրկովկասյան պատերազմը, ոչ թե պատերազմ էր, "Անդրկովկասի եւ թուրքիոյ, այլ հայերու եւ թուրքերու միջեւ"[13]:

---

[12] З. А в а л о в. *Նշվ. աշխ., էջ 44.*

[13] *Ալ. Խ а т и с я н. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 52:*

Սրված տարաձայնությունների պատճառով Անդրկովկասյան դաշնության փլուզումը դարձավ անխուսափելի: "Օր օրի վրա,– գրում է Ս. Վրացյանը,– սաստկանում էին հակամարտութիւնները կովկասյան ժողովուրդների միջև, որոնցից վրացիները գաղտնի, բայց տենդագին որոնում էին գերմանացիների հովանավորութիւնը, ադրբէջանցիները բռնել էին թիւրքերի փեշից եւ քաշում էին դեպի Բաքու, որը այդ օրերին բոլշեւիկների ձեռքն էր. հայերը մնացել էին մենակ եւ օրհասական կռիւ էին մղում մահ ու աւեր սփռելով առաջ շարժւող թիւրքական զորքերի դեմ"[14]:

Ստեղծված պայմաններում վրացիներն առաջինը սկսեցին ուղիներ փնտրել դուրս գալու ծանր կացությունից: Նրանք ո՛չ տրամադիր էին պատերազմել թուրքերի դեմ և ո՛չ էլ ի վիճակի էին: Այդ բանն ակներև դարձավ 1918 թ. ապրիլի 1-ին Բաթումի անկումից հետո: Դեռևս մարտի վերջերին անդրկովկասյան կառավարության վրաց հատվածն ու քաղաքական շրջանները, գաղտնի, թե բացահայտ, ուղիներ էին փնտրում գտնել մի հովանավոր պետություն և նրա օգնությամբ դուրս գալ պատերազմական վիճակից: Եվ այդպիսի ամենահավանական պետությունը դարձավ Օսմանյան Թուրքիայի դաշնակից Կայսերական Գերմանիան: Ալ. Խատիսյանն իր հուշերում գրում է. "Բաթումի խորհրդաժողովի վերջին օրերուն Տրապիզոն եկան երեք խորհրդաւոր գերման սպաներ, որոնք այցելութիւն տվին Չխենկելիին: Վերջինս պաշտոնապես ոչինչ ըսաւ պատուիրակութեան այդ այցելութեան մասին, բայց անպաշտոն կերպով յայտնեց ինձ, որ եկողները մասնաւոր մարդիկ են, շահագրգռուած Զիատուրիի մանկանեզով (խոսքը մարգանեցի հանքի մասին է – Ա. Հ.)"[15]:

Վրաց-գերմանական հարաբերություններն ավելի իրական հողի վրա դրվեցին արդեն մայիսի կեսերից, երբ Վրաստանի ու Անդրկովկասի ռազմաքաղաքական վիճակն ավելի էր բարդացել: Վրաց քաղաքական ղեկավարները Վրաստանի փրկության հույսը կապեցին Գերմանիայի օգնության հետ: Դա համընկնում էր նաև Գերմանիայի շահերին, քանի որ տնտեսական, հաղորդակցության ուղիների, նավահանգիստների ու այլ տեսակետից Վրաստանն ուներ գրավչություն. մի բան, որ պակասում էր Հայաստանում: Զ. Ավալովը հավաստում է, որ մայիսի 21-ին սկսեցին գաղտնի բանակցություններ, հանդիպումներ Գերմանիայի պատվիրակության և Թիֆլիսից Բաթում ժամանած Վրաստանի Ազգային խորհրդի նախագահ, Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատ (մենշևիկների) առաջնորդ Նոյ Ժորդանիայի, Բաթումում գտնվող Ակակի Չխենկելու և վրացի այլ պաշտոնատար անձանց միջև[16]: Ն. Ժորդանիան Գերմանիայի ներկայացուցիչներից (ֆոն Լոսով, կոմս

---

[14] *Ս. Վ ր ա ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 146:*

[15] *Ալ. Խ ա տ ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 53:*

[16] Ց. А в а л о в. *Նշվ. աշխ., էջ 56:*

Շուլենբուրգ, ֆոն Կրես) սկզբունքորեն ստացավ երաշխիքներ Վրաստանի անկախության ու տարածքային ամբողջականության վերաբերյալ և հաջորդ օրը՝ մայիսի 22-ին, վերադարձավ Թիֆլիս: Հետագա օրերին՝ մայիսի 23, 24, 25-ին ևս շարունակվեցին վրաց-գերմանական անդրկուլիսային բանակցությունները, որոնք տվեցին իրենց պտուղները: Գեներալ ֆոն Լոսովը, փաստորեն, բանակցելով վրացիների հետ՝ Վրաստանի անկախությունը պաշտպանելու երաշխիքով, մայիսի 25-ի երեկոյան Բաթումից նավով մեկնեց Փոթի, այնտեղից էլ՝ հայրենիք: Արդեն ծրագրվել էր, որ մայիսի 26-ին հռչակվելու էր Վրաստանի անկախությունը: Նախագծվեց մի ժամանակավոր համաձայնագիր, որը, պայմանավորվածության համաձայն, ստորագրվեց մայիսի 28-ին Փոթիում արդեն նորանկախ Վրաստանի վարչապետ Նոյ Ռամիշվիլու և գեներալ ֆոն Լոսովի միջև[17]: Միաժամանակ կնքվեցին տնտեսական բնույթի մի շարք փաստաթղթեր: Վրաստանը ստանում էր անկախության և անվտանգության երաշխիք՝ Գերմանիայի հովանու ներքո, բացի այդ՝ Վրաստանը ճանաչում էր Բրեստի պայմանագրի պայմանները, իսկ դրա դիմաց Գերմանիան իրավունք էր ստանում օգտվելու վրացական երկաթուղիներից, նավահանգիստներից, այլ ենթակառուցվածքներից, հանքահումքային ռեսուրսներից[18]:

Հավաստի տվյալներ կան, որ Վրաստանի անկախության հռչակման նախօրյակին՝ մայիսի 25-ին, Սեյմի սոցիալ-դեմոկրատական խմբակցության խոսնակ Ի. Ծերեթելին մահմեդական (ադրբեջանական) խմբակցության ղեկավարներին տեղեկացրել էր Վրաստանի անկախանալու մասին: Դրանից հետո մահմեդականները ևս ձեռնամուխ են լինում Ադրբեջանի անկախացման գործընթացին, բնականաբար, ստանալով Թուրքիայի հովանավորությունը[19]:

Անել վիճակում են հայտնվում Բաթումի հայ պատվիրակները: Հայոց Ազգային խորհրդի գիտությամբ՝ նրանք որոշում են վրացիների օրինակով ապավինել գերմանացիների հովանավորությանը: Սակայն ֆոն Լոսովը հայտնում է, որ թուրքերն իրենց չեն լսում և հայերին խորհուրդ է տալիս պատվիրակություն ուղարկել Գերմանիա:

Գերմանացիները քաջ գիտակցում էին, որ Թուրքիան այն հնարավոր զիջումները, որ կարող էր անել վրացիների համար, երբեք չէր անի հայերի հանդեպ: Այստեղից էլ՝ Գերմանիային ավելի դյուրին էր ստանձնել Վրաստանի հովանավորությունը, էլ չենք խոսում Վրաստանի տնտեսական և հաղորդակցությունների տեսակետից գրավչության մասին, քան տնտեսապես ավեր, գաղթականներով լեցուն ու սովյալ Հայաստանը:

---

[17] Զ. Авалов. *Նշվ. աշխ., էջ 63, 65, Ռ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 32:*

[18] Г. В. Пипия. Политика Германии в Закавказье в 1918 году. Сборник документов. Тбилиси, 1971, с. 14–15, 34–41, 75–99 и др.

[19] *Ռ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 31:*

1918 թ. մայիսի 26-ը քաղաքական առումով դառնում է ճակատագրական Անդրկովկասի համար: Այդ օրը և՛ քաղաքական, և՛ գործնական-փաստաթղթային առումներով նախապատրաստվել էր Վրաստանի անկախության հռչակումը: Ինքնին հասկանալի է, որ Վրաստանի անկախությունը նշանակում էր Անդրկովկասի դաշնային դեմոկրատական հանրապետության քայքայում:

1918 թ. մայիսի 26-ի կեսօրին (ժամը 3-ին) գումարվեց Անդրկովկասյան Սեյմի վերջին նիստը: Սոցիալ-դեմոկրատ խմբակցությունը (ղեկ. Ի. Ծերեթելի) առաջարկեց Սեյմի արձակման և Անդրկովկասի Հանրապետության կազմալուծման մասին: Սեյմը ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունեց հետևյալ բանաձևը. "Պատերազմի ու խաղաղության հարցում Անդրկովկասյան դաշնային հանրապետություն կազմող ժողովուրդների միջև ծագած արմատական տարաձայնությունների պատճառով Սեյմը հայտարարում է Անդրկովկասի Հանրապետությունը լուծարված և վայր է դնում իր լիազորությունները"[20]:

Նույն օրը՝ ժամը 5-ին, վրաց Ազգային խորհուրդը՝ Ն. Ժորդանիայի նախագահությամբ, նախապես ստանալով Գերմանիայի հովանավորությունը, մեծ հանդիսավորությամբ Վրաստանը հռչակեց անկախ: Վրաստանի անկախության հռչակումից անակնկալի գալով՝ պատմական այդ նույն օրը՝ մայիսի 26-ի երեկոյան, գումարվեց նաև Հայոց Ազգային խորհրդի նիստ, որում, չնայած վրաց մենշևիկների դեմ ուղղված բողոքներին ու դժգոհություններին, այնուամենայնիվ, վերաբերմունք ցույց տալով Վրաստանի անկախությանը՝ այն ընդունվեց որպես կատարված փաստ: Միաժամանակ Ազգային խորհուրդն իր վրա վերցրեց հայկական շրջանների նկատմամբ ժամանակավոր կառավարության ֆունկցիաներ[21]:

Հաջորդ օրը՝ մայիսի 27-ին (ըստ Ս. Վրացյանի՝ մայիսի 26-ին), ՀՅԴ Թիֆլիսի ներկայացուցչական ժողովի և թաղային կոմիտեների անդամների համատեղ-արտակարգ նիստում, լսելով Սեյմի արձակման և Վրաստանի անկախության հայտարարության մասին հարցերը, ընդունվեց հետևյալ բանաձևը. "Ի նկատի առնելով այն, որ Անդրկովկասեան սեյմի ինքնացրումից եւ Վրաստանի՝ անկախություն յայտարարելուց յետոյ լուծելու է Անդրկովկասեան կառավարութիւնը, եւ հայ ժողովուրդը մնալու է բախտի բերմունքին՝ ներկայացուցչական ժողովը գտնում է անհրաժեշտ, որ Հայոց Ազգային խորհուրդը, ուժեղացնելով իր կազմը, անցնի գործելու հայութեան կենտրոնում՝ ստանձնելով կառավարական ֆունկցիաներ՝ օժտած դիկտատորական իրաւունքներով հայ կեանքի բոլոր երեւոյթների եւ գործերի նկատմամբ"[22]: Այդ նշանակում է, որ ՀՅԴ-ն, որը մինչ այդ թե՛ իր ծրագրերով և թե՛ իր գործելակերպով արտահայտվում էր ռուսական համապետականության օգ-

---

[20] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 330.

[21] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 36–37:*

[22] *"Հորիզոն", 29. V. 1918, Ս. Վ ր ա ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 152:*

տին՝ բավարարվելով միայն Ռուսաստանի կազմում ինքնավարության պահանջով, այժմ Ռուսաստանում և Անդրկովկասում ծավալող պատմաքաղաքական դեպքերի ու իրադարձությունների տրամաբանությամբ ինքնաբերաբար կանգնում է անկախ պետականության գաղափարի նյութականացման փաստի առաջ:

Այն բանից հետո, երբ մայիսի 27-ին մահմեդականների (ադրբեջանական) Ազգային խորհուրդը, հիմք ունենալով Անդրկովկաս ներխուժած իր ցեղակից Թուրքիայի անվերապահ աջակցությունն ու հովանավորությունը, հայտարարեց Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության անկախության մասին, որին, ի դեպ, հենց այդ ժամանակ թուրքերն առաջին անգամ կոչեցին "Ադրբեջան", Հայոց Ազգային խորհրդին չէր մնում այլ բան, քան կողմնորոշվել դեպի Հայաստանի անկախությունը: "Ընտրություն անելու տեղ չէր մնացել,– մտորում էր Հ. Քաջազնունին ճակատագրական այդ օրերի մասին,– պատմությունը բերել կանգնեցրել էր մեզ մի որոշ գծի առջև. պետք է հանդգնություն ունենայինք անցնել վրայից, եթե չէինք ուզում խորտակվել: Պետք է տեր դառնայինք մեր հայրենիքին, ապա թե ոչ՝ կկորցնեինք այն՝ գուցե անդառնալիորեն: Եթե տատանվեինք, եթե ուշացնեինք մեր հայտարարությունը, Հայաստանը կմնար res nullius *(ոչ ոքի չպատկանող իր) ու իբրև այդպիսին բաժին կդառնար հարևաններին՝ թուրքերին, վրացիներին, ադրբեջանցիներին"*[23]*:*

Անկախության խնդիրը քննարկվեց Ազգային խորհրդի՝ մայիսի 28-ի նիստերում (առավոտյան և երեկոյան): Այդ օրը պետք է պատասխան տրվեր նաև Բաթումում մայիսի 26-ին թուրքերի կողմից Հայաստանին ներկայացրած վերջնագրին, քանի որ 29-ին լրանում էր դրա ժամկետը: Մայիսի 27-ի երեկոյան նիստում ստեղծված կացության մասին հանգամանալի զեկուցում տվեցին Բաթումից նոր վերադարձած հայ պատվիրակներ Հ. Քաջազնունին և Ալ. Խատիսյանը: Նրանք ելքը նույնպես տեսնում էին Հայաստանի անկախության հռչակման մեջ: Բուռն քննարկումներից հետո Հայոց Ազգային խորհուրդն որոշեց ընդունել թուրքերի վերջնագիրը՝ Բաթում գործուղել նոր պատվիրակություն՝ Ալ. Խատիսյան (նախագահ), Հ. Քաջազնունի, Մ. Պապաջանյան կազմով, տալով նրան անսահմանափակ լիազորություն՝ բանակցելու և Անկախ Հայաստանի անունից կնքելու հաշտություն: Սակայն անկախության պաշտոնական հայտարարության հարցն առայժմ հետաձգվեց՝ չնայած այդ օրն անկախության կողմնակիցները խորհրդում արդեն ունեին մեծամասնություն:

Հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, գումարվեց ՀՅԴ Արևելյան և Արևմտյան բյուրոների, ՀՅԴ Թիֆլիսի ԿԿ-ի ու Սեյմի և Հայոց Ազգային խորհրդի դաշնակցական ներկայա-

---

[23] *Հ. Քաջազնունի. Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, 1994, էջ 23–24:*

ցուցիչների միացյալ նիստը: Այստեղ մեկ անգամ ևս քննության առնվեց քաղաքական կացությունը և որոշվեց Հայաստանը հայտարարել անկախ հանրապետություն: Միաժամանակ որոշվեց կազմել կառավարություն՝ միջկուսակցական սկզբունքով, ինչպես նաև Ազգային խորհուրդն ու նորակազմ կառավարությունը տեղափոխել Երևան, որը պետք է դառնար պետության մայրաքաղաքը: Այդ նույն նիստում Հ. Քաջազնունին առաջադրվեց կառավարության նախագահի (վարչապետի) թեկնածու[24]*:*

Միայն դրանից հետո՝ մայիսի 30-ին, Հայոց Ազգային խորհուրդը կատարեց վճռական քայլ՝ որոշեց հայտարարություն անել Հայաստանի անկախության մասին: Հանձնարարվեց Նիկոլ Աղբալյանին մշակել Հայաստանի անկախության պաշտոնական հայտարարագիրը (հռչակագիրը), որի տեքստը նույն օրը ընդունվեց Հայոց Ազգային խորհրդի կողմից, իսկ մայիսի 31-ին այն լույս տեսավ մամուլում: Նրանում ասվում էր. “Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծարումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր կացության հանդեպ՝ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմելու հայոց ազգային կառավարություն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար”[25] *(ընդգծումը մերն է – Ա. Հ.): Եվ քանի որ մայիսի 28-ին Հայոց Ազգային խորհուրդը վճիռ կայացրեց Բաթում ուղարկել նոր պատվիրակություն և Անկախ Հայաստանի անունից բանակցել ու հաշտություն կնքել Թուրքիայի հետ, այդ իսկ պատճառով “Մայիսի 28”-ը մտավ հայոց պատմության մեջ՝ որպես Հայաստանի անկախության օր: Իսկ երկու օր անց՝ մայիսի 30-ին, ընդունված և 31-ին հրապարակված հայտարարագիրը եկավ պաշտոնական ձևակերպում տալու այդ ակտին:*

Հռչակագրում քաղաքական և հոգեբանական որոշակի գործոնների թելադրանքով թեև կոնկրետ չէր խոսվում անկախության մասին, սակայն դիվանագիտական մոտեցմամբ ձևակերպված այն միտքը, որ Հայոց Ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն, ինքնըստինքյան նշանակում էր Հայաստանի անկախության հռչակում: Բացի այդ, հայտարարագրում հեռատեսորեն մատնանշվում է “հայկական գավառներ” հասկացությունը, որի տակ հասկացվում են Անդրկովկասի նահանգներում գտնվող հայաբնակ բոլոր գավառները, այդ թվում՝ Նախիջևանը, Զանգեզուրը, Ղարաբաղը, Գանձակի հայկական շրջանները, Լոռին, Ջավախքը, թուրքական զորքերի կողմից

---

[24] *Յ. Իրազեկ. նշվ. աշխ., էջ 35, Ս. Վրացյան. նշվ. աշխ., էջ 153:*

[25] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 59–60, “Հորիզոն”, 31. V. 1918,* «Кавказское слово», 31. V. 1918.

ռազմակալած Երևանի նահանգի մի շարք գավառները և Կարսի մարզը: "Հայկական գավառներ" անվան տակ տրամաբանորեն կարելի է ենթադրել, որ անգամ նկատի էր առնվում արևմտահայ գավառները:

Այսպիսով, երեք օրվա ընթացքում Անդրկովկասյան դաշնային հանրապետության փլատակների վրա հիմնվեց երեք անկախ պետություն՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունները: Հարկ է նշել, որ մայիսի 28-ին Թիֆլիսում՝ Արամյանցի տանը, Հայաստանի անկախության մասին վճիռը կայացվել է խորհրդի անդամների բուռն քննարկումների և խռովահույզ տրամադրությունների պայմաններում: Սակայն, ինչպես վկայում է Ալ. Խատիսյանը, Ազգային խորհուրդը ներկայացնող գրեթե բոլոր չորս՝ ՀՅԴ, ՀԺԿ, Սոցիալ-դեմոկրատ և Էսէռ կուսակցությունների խմբակցությունները, ի վերջո, հանգեցին անկախության գաղափարին և "անկախության բանաձևը ընդունվեց Ազգային խորհրդի բոլոր կուսակցությունների համաձայնությամբ"[26]:

Մայիսյան այդ ծանր օրերին Հայոց Ազգային խորհուրդը ներկայացնող քաղաքական ուժերը հանդես եկան գրեթե միասնական, ինչը պայմանավորված էր արտաքին վտանգով ու առաջին հերթին թուրքական մահաբեր ներխուժմամբ: Կնշանակի՝ 1918 թ. մայիսին՝ ճակատագրական այդ իրադարձությունների ժամանակ, Ազգային խորհուրդը ներկայացնող կուսակցությունները և անկուսակցական ներկայացուցիչները ցուցաբերել են ազգային համախմբման ու միասնության վառ օրինակ:

Իհարկե, Ազգային խորհրդի շատ անդամներ երկչոտ ու թերահավատ զգացումով էին համակված անկախության հանդեպ: Անկուսակցական և Էսէռ անդամներից զատ՝ դաշնակցականներ Ա. Ահարոնյանը, Ս. Վրացյանը, Ռ. Տեր-Մինասյանը և Ա. Բաբալյանը ևս տարակուսում էին անկախության խնդրում: Այդ մտավախությունը պետք է բացատրել 1918 թ. գարնանը, թուրքական աղետալի արշավանքի պայմաններում, հայ ժողովրդի համար ստեղծված չափազանց բարդ քաղաքական վիճակով, որի ժամանակ, ըստ Ս. Վրացյանի, "անկախությունը կարող էր ավելի ևս ծանրացնել կացությունը"[27]: Սկզբում անկախության փաստը չընդունող գործիչներից Ա. Բաբալյանն իր դիրքորոշումը հիմնավորում էր նրանով, որ "մնալով միանգամայն մենակ եւ շրջապատուած թշնամիներով ու անբարեացակամ տարրերով, անկախութեան յայտարարութեամբ մենք կարող էինք մեծապես վնասել մեր ժողովրդի ֆիզիկական անկայուն գոյութեանը եւ նոր կոտորածների ու գրաւումների տեղի տալ"[28]: Անկախության հարցում առարկողները չունեին գործնական առա-

---

[26] *Ալ. Խատիսյան. նշվ. աշխ., էջ 84:*

[27] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 644, թ. 1:*

[28] *Ա. Բաբալյան. Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրե, 1959, էջ 5–6:*

ջարկ, բացի բողոք-դժգոհություններ արտահայտելուց: Հարկ է նշել, որ անկախության խնդրում չկար միասնություն նաև ՀՅԴ շարքերում: Այսպես, ՀՅԴ Բաքվի կոմիտեն, որը շատ խնդիրներում համերաշխվում էր Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունայի հետ, ոչ միայն դեմ արտահայտվեց անկախությանը, այլև այն որակեց որպես "հայ ժողովրդի կամքի" ոտնահարում[29]: Անկախության խնդրում կար նաև հոգեբանական արգելք, որն ամենից առաջ նշանակում էր կտրվել Ռուսաստանից:

Եվ, իրոք, Հայոց Ազգային խորհուրդը տարակուսում էր այդ հարցում. դրա համար կային լուրջ հիմնապատճառներ: Դեռևս թարմ էր 1,5 մլն հայության կորստի հիշողությունը, թշնամու զորքը գտնվում էր Երևանի մոտերքում և թույլ ու անօգնական Հայաստանի անկախության հռչակումը, առանց քաղաքական ծանրակշիռ դիրքորոշումների և երաշխիքների, կարող էր լուրջ սպառնալիքի տակ դնել արևելահայության գոյությունը: Հակառակ հայերի՝ անկախության հարցում ամենևին չտատանվեցին վրացիները և ադրբեջանցիները: Նրանք չերկմտեցին այն պարզ պատճառով, որովհետև արդեն ունեին իրենց հովանավոր պետությունները՝ հանձինս Գերմանիայի և Թուրքիայի, իսկ Հայաստանը չուներ այդպիսին:

Հակառակ Հայոց Ազգային խորհրդի անդամ կուսակցությունների՝ Ս. Դ. Հնչակյան կուսակցության անդրկովկասյան կենտրոնական վարչությունը բուռն կերպով բողոք արտահայտեց մայիսի 28-ի Հայաստանի անկախության հայտարարության կապակցությամբ: Այդ որոշումը համարվեց ոչ օրինական, իսկ Ազգային խորհուրդը՝ որպես ինքնակոչ մարմին, որն "ուզուրպացիա է կատարում հայ ժողովրդի ազատ իրավունքների դեմ"[30]:

Հայաստանի անկախության, թերևս, ամենաանհաշտ ընդդիմախոսը (հակառակորդը) հայ կոմունիստ-բոլշևիկներն էին: Նրանք չէին պատկերացնում Հայաստանի անջատումը և գոյությունն առանց Խորհրդային Ռուսաստանի: Համայնավարների պատկերացմամբ՝ այնպես, ինչպես որբը չի կարող ապրել առանց խնամակալի, նույնպես և հայ ժողովուրդը չի կարող գոյատևել առանց Ռուսաստանի: Այնինչ, Հայաստանի և հայ ժողովրդի պաշտպանության ու անվտանգության միակ հուսալի երաշխավորը կարող է լինել միայն ինքը՝ հայ ժողովուրդն իր հավաքականությամբ, նրա հոգևոր ներուժը, ազգային բանակը, պետական ու հանրային մյուս կառույցները և այլն:

Անկախության հարցում առավել ակտիվ էին հայ սոցիալ-դեմոկրատ մենշևիկներ Ա. Երզնկյանը, Ս. Փիրումյանը, ովքեր հետևում էին իրենց ավագ գործընկեր վրաց մենշևիկներին: Բայց տեղին է հիշեցնել, որ մի երկու տարի անց արդեն

---

[29] *"Արև" (Բաքու), 9. VI. 1918:*

[30] *ՀԱԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 221, թ. 1:*

բոլշևիկի "պատմության հագած" այդ նույն Ա. Երզնկյանը "Մայիսի 28"-ը համարում էր "հայ աշխատավորության ստրկացման օր"[31]:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե այդ պահին ինչպիսին էր անկախության խնդիրը հայ հանրության ընկալումներում, ապա պետք է արձանագրել, որ Հայաստանի անկախության հռչակումից հետո ժողովուրդն իր մեծամասնությամբ (հատկապես գաղութահայությունը, գաղթականությունը, անկախությունը կերտած Արարատյան դաշտի բնակչությունը և այլն)՝ անկախությունն ընդունեց անվարան:

Չնայած անկախությունը եկավ արագ և անսպասելի, սակայն այն ուներ իր ներքին տրամաբանությունը: Ակներև է, որ եթե Հայոց Ազգային խորհուրդը տվյալ պահին իրեն չհայտարարեր հայկական գավառների գերագույն իշխանություն, ապա դրանք պարզապես բաժին կդառնային հարևան թուրքերին, ադրբեջանցիներին ու վրացիներին: Հարկ է ընդգծել, որ այդպես էին վճռել նաև Կովկասի՝ այն ժամանակվա փաստական տերերը՝ Գերմանիան և Թուրքիան: Եվ այս առնչությամբ միանգամայն հիմնագուրկ է Ա. Երզնկյանի և հետագայում նրան ձայնակցած շատ հեղինակների արտահայտած այն միտքը, թե մայիսի 28-ին Հայաստանի անկախացումը կատարվել է Թուրքիայի բռնի թելադրանքով[32]: Այնինչ, փաստերը և դեպքերի ու իրադարձությունների տրամաբանությունը հուշում են, որ եթե խնդիրը թողնվեր Թուրքիային, ապա նա ոչ միայն Հայաստանը չէր "անկախացնի", այլև հնարավորության դեպքում, պանթուրքական ծրագրի համատեքստում, Անդրկովկասում ևս հայ չէր թողնի ու արևելահայոց հարցը ևս "կլուծեր" արևմտահայոց նման: Այդ ժամանակ հարցականի տակ էր դրված ոչ միայն Հայաստանի քաղաքական միավորի ինքնուրույն գոյությունը, այլև բուն արևելահայության ֆիզիկական գոյությունը:

Այս առնչությամբ հետաքրքրությունից զուրկ չէ այն, որ Հայաստանի և հայ ժողովրդի հետագա ճակատագրի հարցում Թուրքիայի կառավարող շրջաններում գոյություն է ունեցել երկու հիմնական մոտեցում (տեսակետ). այդ մասին պատմում է Ալ. Խատիսյանն իր հուշերում: Դրանցից մեկը՝ առավել ծայրահեղ թևը, որը գլխավորում էր ռազմական նախարար Ի. Էնվեր փաշան, գտնում էր, որ հայերին պետք է հիմնովին բնաջնջել նաև Կովկասի մեջ և մեկընդմիշտ ազատվել Հայկական հարցից: Մյուս հոսանքը, որը պաշտպանում էր մեծ վեզիր (վարչապետ) Մ. Թալեաթ փաշան, գտնում էր, որ անհնար է հայերին լիովին ոչնչացնել. ուստի ավելի լավ է հայերին ինչ որ չափով զոհացում տրվի, որովհետև, եթե "նոյնիսկ

---

[31] Ա. Երզնկյան. Աշխատավորության դատարանին, Թիֆլիս, 1927, էջ 50:

[32] Նույն տեղում, էջ 50–51, Ա. Դարբինյան. Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 435, Մ. Սերոբյան. Հայաստանի անկախության առթիվ, Գահիրե, 1950, էջ 9–10 և ուրիշներ:

100000 հայեր մնան աշխարհի երեսին, մեզի հանգիստ պիտի չտան երբեք"[33]: Նրա կարծիքով, մի փոքր հայկական պետության գոյությունը կարող էր պատնեշ, "բուֆեր" լինել Թուրքիայի ու նրա դարավոր թշնամի Ռուսաստանի միջև, իսկ մյուս կողմից անկախ Հայաստանի գոյությունը միջազգային հանրության շրջանում կարող էր հայացք ձևավորել, որ դրանով լուծվել է Հայկական հարցը և այլևս կարիք չկա դրսի միջամտության: Ընդ որում, այդ փոքրիկ Հայաստանը ստեղծվելու էր ոչ թե արևմտահայ հողի վրա, որը թուրքերն անվերապահորեն իրենցն էին համարում, այլ նախկին Ռուսական կայսրության տիրապետության տակ գտնվող արևելահայ մի հողակտորի վրա: Ի վերջո, այդ պայքարում հաղթում է Թալեաթի տեսակետը:

Ստեղծված իրավիճակում, սակայն, անկախ Հայաստանի գոյությունը կարող էր և ժամանակավոր լինել, որովհետև դեպի Բաքու շտապող թուրքական զորքը մտադիր էր, ինչպես ասում են, "ձեռքի հետ" վերացնել հայկական պետությունը, չէր բացառվում նաև հայ ազգաբնակչությանը: Եվ պատահական չպետք է համարել 1918 թ. սեպտեմբերին Բաքվի գրավումից հետո Ստամբուլում լույս տեսնող իթթիհատական "Ենի գյուն" ("Նոր օր") պաշտոնական թերթում զետեղված Անդրկովկասի այն քարտեզը, որում չկար Հայաստանը՝ իբրև ազգային-պետական միավոր[34]: Այդ քարտեզում հայ ազգաբնակչության տեղաբաշխումն Անդրկովկասում ներկայացված էր ընդամենը մի քանի առանձին կղզյակների տեսքով: Դրա փոխարեն ամբողջ Արևելյան Հայաստանը պատկերված է "Մեծ Ադրբեջանի" կազմում: Հավանաբար, այս քարտեզը նկատի ունեն ներկայիս ալիևականները, երբ Հայաստանի Հանրապետության տարածքը, ըստ էության, համարում են ադրբեջանական հող, իսկ Երևանն էլ՝ թուրքական քաղաք, որը "նվիրել են" հայերին:

Նույն կերպ հայկական պետականության ստեղծման մտադրություն չի ունեցել նաև Գերմանիան, որը, ինչպես հայտնի է, որոշակի պատասխանատվություն էր կրում հայ ժողովրդի ճակատագրի հարցում: Նա էլ, ըստ էության, խնդրի լուծումը տեսնում էր հայկական գավառները Վրաստանի և Ադրբեջանի միջև տարալուծելու[35]:

Կնշանակի՝ Հայաստանի անկախության ակտը պատմական անհրաժեշտություն էր և ստեղծված պայմաններում չուներ այլընտրանք: Այդ օրերին հայ ժողովուրդն ունեցավ իր "երկրորդ Ավարայրը": Մայիսվերջյան հաղթական շաբաթը, փաստորեն, ծնեց Հայաստանի անկախությունը: Կարելի է վստահ ասել, որ անկա-

---

[33] *Ալ. Խատիսյան. նշվ. աշխ., էջ 89:*

[34] *"Հորիզոն", 30. X. 1918:*

[35] Armenia. Political and Ethnic Boundaries 1878–1948. Archive Editions, London, 1998, p. 392.

խությունը ձեռք բերվեց ոչ թե Թիֆլիսում՝ Հայոց Ազգային խորհրդի վախվորած ու հոգեմաշ նիստում, այլ Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում: "Մայիսի 28"-ի բանաձևն իրավական վավերացումը եղավ Հայաստանում մղվող մայիսյան հաղթական հերոսամարտերի. "Սարդարապատի, Ղարաքիլիսեի և Բաշ-Ապարանի ճակատամարտերուն մեջ,– գրում էր այդ մարտերի հերոսներից մեկը՝ Դրոն,– իր տարած անօրինակ հաղթանակներով՝ հայ ժողովուրդը տիրացավ ազատ և անկախ ապրելու անփոխարինելի բարիքին: Այդ ճակատամարտերն է-ղան պատճառ, որ տաճիկները հարկադրվեցին դաշինք կնքել հայերի հետ և ճա-նաչել Հայաստանի անկախությունը"[36]:

1918 թ. մայիսի 28-ի պատմական որոշումից երկու շաբաթ անց՝ հունիսի 13-ին, նորընտիր վարչապետ Հ. Քաջազնունին "դաշնակիցներին" և, ընդհանրապես, ի լուր աշխարհի պաշտոնապես հայտարարություն արեց՝ Հայաստանի անկախութ-յան մասին[37]: Դրանից հետո սկսվեց պետականաշինության գործընթացը:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանի անկախության քաղաքական և հոգևոր արժեքն ավելի մեծ է, քան Վրաստանի և Ադրբեջանի պարագայում, քանզի հայ ժողովուրդն անկախությունը ձեռք բերեց իր դարավոր ոսոխի դեմ կյանքի ու մահվան ահեղ կռիվների արդյունքում, ուստի այդ անկախության գինը շատ ավելի թանկ է և մնա-յուն: Մինչդեռ, եթե Վրաստանը քիչ թե շատ թույլ դիմադրեց և գտավ իր հովանա-վորին, ապա Ադրբեջանը, ըստ էության, ադուհացով դիմավորեց ցեղակից թուրքի մուտքն Անդրկովկաս:

Հայաստանի անկախությունը թեև անսպասելի էր, սակայն ուներ իր ներքին օ-րինաչափ ընթացքը: Անշուշտ, անկախությունը համաշխարհային պատերազմի և ռուսական հեղափոխությունների հետևանք էր: Բայց և դա արդյունք էր հայ ժո-ղովրդի նախընթաց տասնամյակների և 1918 թ. Մայիսյան հերոսական ոգորումնե-րի: Այդ ամենի արդյունքում, հարյուրամյակների ընդմիջումից հետո կրկին վերա-կանգնվեց հայոց անկախ պետականությունը՝ քաղաքական նոր արժեհամակար-գով ու պետական կառուցվածքով: Հայաստանի անկախության հռչակումը, իրավ-ամբ, շրջադարձ եղավ հայ ժողովրդի քաղաքական ու հոգևոր-մշակութային կյան-քում: Դրանով կարելի է ասել, որ փակվում է հայ ժողովրդի ողբերգական և հերո-սական դրվագներով հարուստ նոր պատմության ժամանակաշրջանը ու սկսվում նորագույն՝ հայկական պետականությունների պատմության դարաշրջանը: Ահա դրանում է Մայիսյան հերոսամարտերի ու "Մայիսի 28"-ի 100-ամյա խորհուրդը: Ի նշանավորումն այդ իրադարձության՝ Մայիսի 28-ը համարվում է համայն հայութ-

---

[36] *Դրո, Երևան, 1991, էջ 107–108:*

[37] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 146:*

յան նվիրական տոներից մեկը՝ Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության օրը:

ПУТЬ НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ

АРАРАТ АКОПЯН

Резюме

Первая мировая война и русские революции 1917 года привели к коренным изменениям и сдвигам в общественно-политической жизни Закавказья. Огромная Российская империя разрушилась и разделиласъ на части. В январе 1918 года, в результате нападения турецкой армии, события стали развиваться таким образом, что Закавказье объявило свою независимость. Но, из-за острых внутренних противоречий, это государство оказалось нежизнеспособным и развалилось. На его руинах возникли три независимые республики: Грузия, Азербайджан и Армения.

После нескольких столетий армянский народ вновь восстановил свою независимость. Провозглашение независимости Армении стало поворотным пунктом в политической и культурной жизни армянского народа. С этого момента начинается новейшая эпоха армянской государственности. В этом и заключается смысл «28 мая» – дня незовисимости Первой Республики.

THE PATH OF INDEPENDENCE OF ARMENIA

ARARAT HAKOBYAN

Summary

The First World War and the 1917 Russian revolutions resulted in fundamental changes and shifts in social-political life of Transcaucasia. The immense Russian Empire collapsed and split into parts. In January 1918, in the result of the fall of the Turkish army, the events developed in a way that Transcaucasia declared its independence. Nevertheless, because of sharp internal contradictions this state proved to be nonviable and collapsed. Three independent republics-Armenia, Georgia and Azerbaijan arose on its ruins.

After several centuries the Armenian nation again restored its independence. The proclamation of independence of Armenia became the turning point in the political and cultural life of the Armenian nation. From that moment on the modern era of the Armenian statehood begins. Herein lies the significance of “May 28”.